

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՐԱՏԻ

2019 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏՈՒՄ

ՌԵԿՏՐ՝

Վ.Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի այսուհետ՝ (Ինստիտուտ) բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով սովորողների պրակտիկայի (այսուհետ՝ Պրակտիկա) անցկացման ողջ գործընթացը:

1.2. Կանոնակարգը համապատասխանում է բոլոնյան կրթության կազմակերպմանը ներկայացնող պահանջներին, Հայաստանի Հանրապետության «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքներին, բարձրագույն մասնագիտական կրթական պետական չափորոշիչներին, ինչպես նաև ՀՀ միջբուհական կոնսորցիումի կողմից ընդունված փաստաթղթերին, բակալավրի կրթական ծրագրին և մանկավարժական մասնագիտությունների մանկավարժական պրակտիկային և մագիստրոսական կրթության չափորոշիչներին:

1.3. Սույն կանոնակարգով սահմանված պահանջները տարածվում են Ինստիտուտի՝ բոլոր մասնագիտությունների գծով սովորողների վրա:

2. Պրակտիկայի տեսակները, ժամանակացույցը և տևողությունը

Ինստիտուտում անցկացվում են պրակտիկայի հետևյալ տեսակները.

2.1. *Ուսումնական.* անցկացվում է մասնագետներ թողարկող ամբիոնների բոլոր կուրսերում և ներառված է «Մասնագիտություն» առարկայի ծրագրում:

2.2. *Մանկավարժական.* Իրականացվում է մասնագիտական մանկավարժություն մասնագիտության ուսումնառության շրջանակում: Առկա ուսուցման համակարգում անցկացվում է 3-րդ կուրսի 6-րդ կիսամյակում 8 շաբաթ տևողությամբ (ըստ ուսումնական պլանի), իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 4-րդ կուրսի 8-րդ կիսամյակում 3 շաբաթ տևողությամբ:

2.3. *Մասնագիտական.* Իրականացվում է մասնագիտական մանկավարժություն և լրագրություն մասնագիտության ուսումնառության շրջանակում: Առկա ուսուցման համակարգում անցկացվում է 4-րդ կուրսի 7-րդ կիսամյակում, 6 շաբաթ տևողությամբ, իսկ հեռակա ուսուցման համակարգում 5-րդ կուրսի 9-րդ կիսամյակում 3

շաբաթ տևողությամբ: Լրագրություն մասնագիտության ուսումնառության շրջանակում մասնագիտական պրակտիկա անցկացվում է նաև առկա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի 6-րդ կիսամյակում 8 շաբաթ տևողությամբ:

2.4. *Կլինիկական*. Իրականացվում է սպորտ մասնագիտության առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա, կրթական ծրագրի և մասնագիտական մանկավարժության ադապտիվ ֆիզիկական կուլտուրա կրթական ծրագրի ուսումնառության շրջանակներում հետևյալ ժամկետներում.

- Կինեզիոլոգիա կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգում՝
 - ✓ 3-րդ կուրսի 6-րդ կիսամյակում 8 շաբաթ տևողությամբ,
 - ✓ 4-րդ կուրսի 7-րդ կիսամյակում 6 շաբաթ տևողությամբ
 - ✓ 4-րդ կուրսի 8-րդ կիսամյակում 12 շաբաթ տևողությամբ:
- Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգում՝
 - ✓ 4-րդ կուրսի 8-րդ կիսամյակում 4 շաբաթ տևողությամբ:
- Կինեզիոլոգիա կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգում՝
 - ✓ 4-րդ կուրսի 8-րդ կիսամյակում 2 շաբաթ տևողությամբ,
 - ✓ 5-րդ կուրսի 9-րդ կիսամյակում 4 շաբաթ տևողությամբ,
 - ✓ 5-րդ կուրսի 10-րդ կիսամյակում 6 շաբաթ տևողությամբ:
- Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգում՝
 - 5-րդ կուրսի 10-րդ կիսամյակում 2 շաբաթ տևողությամբ:

2.5. *Գիտամանկավարժական և գիտահետազոտական*. անցկացվում է մագիստրատուրայում ըստ մասնագիտությունների.

- Մասնագիտական մանկավարժություն մասնագիտության առկա ուսուցման համակարգում ուսուցման 2-րդ կիսամյակում անցկացվում է գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաներ 2-ական շաբաթ տևողությամբ:
- Մասնագիտական մանկավարժություն մասնագիտության հեռակա ուսուցման համակարգում ուսուցման 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում անցկացվում է գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաներ 2-ական շաբաթ տևողությամբ:

- Սպորտ, լրագրություն, հոգեբանություն, կառավարում և շուկայագիտություն մասնագիտության առկա ուսուցման համակարգում ուսուցման 2-րդ կիսամյակում անցկացվում է գիտահետազոտական պրակտիկա 4 շաբաթ տևողությամբ:
- Սպորտ և լրագրություն մասնագիտության հեռակա ուսուցման համակարգում ուսուցման 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում անցկացվում է գիտահետազոտական պրակտիկա 4 շաբաթ տևողությամբ:

3. Պրակտիկայի ղեկավարումը

3.1 Պրակտիկայի ընդհանուր ղեկավարումը իրականացնում են ինստիտուտի ուսումնական մասը, դեկանները և պրակտիկայի և կարիերայի բաժինը:

3.2 Ինստիտուտի պրակտիկայի և կարիերայի բաժնի ղեկավարի պարտականությունները.

3.2.1. Ինստիտուտի ֆակուլտետներում իրականացնել պրակտիկայի մեթոդական ղեկավարումը, կոորդինացնել ինստիտուտի ամբիոնների աշխատանքը, ապահովել պրակտիկային անհրաժեշտ ուսումնամեթոդական փաստաթղթերը՝ ուսումնական մատյանը, պայմանագիրը, գնահատման տեղեկագրերը և այլն:

3.2.2. Հսկում և կոորդինացնում է մեթոդիստների և ուսանողների աշխատանքը:

3.2.3. Ուսումնական մասի, դեկանների հետ համատեղ ընտրում է պրակտիկայի բազաները և մեթոդիստների կազմը, մշակում է պրակտիկայի ընթացքում կատարվելիք առաջադրանքները, գիտամեթոդական խորհրդակցությունների, մեթոդիստների սեմինարների, վերապատրաստման, որակավորման բարձրացման դասընթացների բովանդակությունը և կազմակերպում դրանք:

3.2.4. Պրակտիկայի մեթոդիստներին և ուսանողներին ցույց է տալիս համապատասխան մեթոդական օգնություն:

3.2.5 Ինստիտուտի ռեկտորատի նիստին է ներկայացնում պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների ընթացքը:

3.2.6. Ապահովում է պրակտիկայի թափանցիկությունը և քարոզչությունը:

3.2.7. Պատրաստում է պրակտիկայի անցկացման հրամանը:

3.2.8. Վարում է ուսանողների հաճախումների հաշվառումը և ֆակուլտետների ղեկանների, հեռակա ուսուցման բաժնի վարիչի, մագիստրատուրայի բաժնի վարիչի հետ միջոցառումներ է մշակում:

3.2.9. Վերլուծում և ամփոփում է պրակտիկայի արդյունքները, դրանք ներկայացնում ինստիտուտի գիտական խորհրդին:

4. Պրակտիկայի գնահատումը

4.1. Ուսանողների աշխատանքները գնահատվում է մեթոդիստի և պրակտիկայի և կարիերայի բաժնի ղեկավարի կողմից:

4.2. Պրակտիկայի վերջում մեթոդիստը վերլուծում է ուսանողի կողմից կատարված աշխատանքները և նշանակում դիֆերենցված գնահատական ստուգարքային գրքույկի հատուկ նախատեսված էջում:

4.3 Այն ուսանողները, որոնք հարգելի պատճառով չեն մասնակցել պրակտիկային, ռեկտորատի թույլտվությամբ նրանց տրվում է լրացուցիչ հնարավորություն անցնելու պրակտիկա:

5. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

5.1. Մանկավարժական պրակտիկայի նպատակները.

5.1.1. Ճանաչողական. ծանոթացնել ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների մանկավարժական գործունեության բովանդակությանը և կառուցվածքին (ուսումնական, մարզական, արտադասարանական, դաստիարակչական, ֆիզկուլտուրային առողջարարական, քարոզչական):

5.1.2. Ուսումնամեթոդական. ձևավորել պրոֆեսիոնալ մանկավարժական կարողություններ և հմտություններ. ուսումնամեթոդական, դաստիարակչական, ֆիզկուլտուրային առողջարարական և մարզական գործունեություն իրականացնելու պատրաստություն:

5.1.3. Փորձարարական. ձևավորել մանկավարժական գործունեության ընթացքում ստեղծագործական մոտեցման կարողություններ:

5.1.4. Դաստիարակչական, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նկատմամբ հետաքրքրությունների, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու պահանջմունքի, համամարդկային արժեքների ձևավորում:

5.2. Մանկավարժական պրակտիկայի խնդիրները.

5.2.1. Ուսանողի մասնագիտական գիտելիքների ընդլայնում ու ամրապնդում, մանկավարժական գործունեության նկատմամբ ստեղծագործական հետաքրքրությունների և դրդապատճառների ձևավորում:

5.2.2. Դպրոցում ֆիզիկական դաստիարակության գործընթացի պլանավորման փաստաթղթերի կազման կարողությունների ձևավորում:

5.2.3. Ֆիզիկական կուլտուրայի դասի, արտադասարանական պարապմունքների, ֆիզկուլտուրային առողջարարական և մարզական միջոցառումների անցկացման կարողությունների ձևավորում:

5.2.4. Ապագա ուսուցչի մասնագիտական որակների ձևավորում:

5.2.5. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի կարողությունների ձևավորում, ինքնակրթության ապահովում:

5.2.6. Ուսումնական և արտադասարանական աշխատանքների պլանավորման գնահատման, ինքնագնահատման կարողությունների ձևավորում:

5.2.7. Ինքնուրույն, ուսումնամեթոդական, դաստիարակչական, հետազոտական գործունեություն իրականացնելու կարողությունների ձևավորում:

5.2.8. Ուսումնադաստիարակչական գործընթացի գնահատում և դպրոցականների ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության մակարդակի որոշման կարողության ձևավորում,

5.2.9. Քարոզչական և մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպման և անցկացման կարողության ձևավորում:

5.2.10. Մանկավարժական գործունեության ուսումնասիրման և վերլուծության կարողությունների ձևավորում:

5.2.11. Սովորողների նկատմամբ տարբերակված և անհատական մոտեցում ցուցաբերելու, նրանց տարիքային և անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության և հաշվառման կարողությունների ձևավորում:

5.3. Մանկավարժական պրակտիկայի բազաները և կազմակերպումը

5.3.1. Պրակտիկայի անցկացման վայրը, ժամկետները, մեթոդիստների և ուսանողների խմբերի կազմերը հաստատվում են ինստիտուտի ռեկտորի հրամանով:

5.3.2. Ինստիտուտի մանկավարժական պրակտիկայի բազա են համարվում համապատասխան պայմաններ ունեցող հիմնական և ավագ դպրոցները:

5.3.3. Պրակտիկայի խումբը կազմվում է տարբեր մարզական մասնագիտություն ունեցող ուսանողներից:

5.3.4. Յուրաքանչյուր խմբում ուսանողների քանակը սահմանվում է տվյալ ուսումնական տարվա պրոֆեսորադասախոսական անձնակազմի ժամերի հաշվարկի չափանիշներով:

5.3.5. Մանկավարժական պրակտիկան անցկացվում է պրակտիկայի ծրագրի համապատասխան:

5.3.6. Մեթոդիստներ են ընտրվում Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմից և դպրոցներից ֆիզիկական կուլտուրայի փորձառու ուսուցիչներից:

5.4. Պրակտիկայի անցկացման կարգը

5.4.1. Ինստիտուտի պրակտիկան իրականացվում է համաձայն ինստիտուտի կողմից կնքված պայմանագրի, այն կարող է տեղայնացվել՝ հանրակրթական դպրոցի տնօրենների հետ կնքված պայմանագրի համաձայն: Պրակտիկայի անցկացման պայմանագիրը կնքվում է Ինստիտուտի ռեկտորի և հանրակրթական դպրոցի տնօրենների միջև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այն կարող է լինել ծառայությունների մատուցման վճարովի կամ անհատույց պայմանագիր:

5.4.2. Ինստիտուտը սահմանում է պրակտիկայի մեթոդիստի, հրավիրված մեթոդիստների, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչի և դպրոցի տնօրենների, բեռնվածության չափը: Հաշվարկը կատարվում է ելնելով պրակտիկային մասնակցած փաստացի ուսանողների թվից:

5.4.3. Առանձին դեպքերում Երևանից դուրս բնակվող կամ մասնագիտությամբ աշխատող ուսանողները կարող են պրակտիկան անցնել անհատապես իրենց բնակության վայրին մոտ կամ աշխատավայրում, այն կազմակերպելու

պատրաստության մասին համապատասխան դպրոցի ղեկավարության կողմից գրավոր համաձայնության և կնքված պայմանագրի հիման վրա:

5.5. Պրակտիկային մասնակցող ուսանողների պարտականությունները

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողը պարտավոր է՝

5.5.1. Մասնակցել Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Պրակտիկայի և կարիերայի բաժնի կողմից կազմակերպվող մանկավարժական պրակտիկայի ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսներին:

5.5.2. Ներկայանալ դպրոց ուսումնական պարապմուտքների սկսվելուց 10-15 րոպե առաջ և մեթոդիստի հետ աշխատել սահմանված ժամանակացույցի համաձայն:

5.5.3. Պրակտիկանտները պարտավոր են ենթարկվել դպրոցի ընդհանուր կանոնակարգին, ռեժիմին, կատարել մեթոդիստի, ֆիզկուլտուրայի ուսուցչի, տնօրենի և ուսումնական գծով տնօրենի տեղակալի հրահանգները:

5.5.4. Յուրաքանչյուր պրակտիկանտ պարտավոր է իրեն կցված դասարանի համար կազմել մանկավարժական պրակտիկայի ծրագրով նախատեսված բոլոր փաստաթղթերը և իրականացնել նույն ծրագրով նախատեսված պրակտիկ ամբողջ գործունեությունը:

5.5.5. Իրականացնել ամենօրյա փոխօգնություն խմբում ընդգրկված ուսանողներին՝ դասերի անցկացման, արտադասարանական տարբեր միջոցառումների կազմակերպման հարցերում:

5.5.6. Պրակտիկայի ավարտից 2 օր առաջ պրակտիկանտը մեթոդիստին է ներկայացնում պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ իր հաշվետվությունը (պրակտիկանտի տետրը):

5.6. Մանկավարժական պրակտիկայի խմբի ղեկավարի /մեթոդիստի/ պարտականությունները.

5.6.1. Մասնակցել մեթոդիստների վերապատրաստման մեթոդական խորհրդակցություններին, գիտաժողովներին և խորհրդատվական աշխատանքներին, մանկավարժական պրակտիկայի նախապատրաստական, ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսներին:

- 5.6.2. Պրակտիկայի անցկացման նպատակով դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ ուսանողներին բաշխել ըստ դասարանների:
- 5.6.3. Կազմել ուսանողների ուսումնական պարապմունքների և արտադասարանական դաստիարակչական աշխատանքների ժամանակացույցը:
- 5.6.4. Ապահովել հանրակրթական դպրոցում դասավանդող այլ առարկաների հետ կապը և օգտագործել այն պրակտիկայի ընթացքում:
- 5.6.5. Պարբերաբար դիտել և վերլուծել պրակտիկանտների կողմից անցկացվող դասերը:
- 5.6.6. Կանոնավոր ստուգել և գնահատել ուսանողների կատարած աշխատանքները, անցկացրած դասերը, կազմած փաստաթղթերը, պլանով նախատեսված մյուս աշխատանքները:
- 5.6.7. Ժամանակին հայտնաբերել և վերացնել պրակտիկայի կազմակերպման, անցկացման ժամանակ ի հայտ եկող թերություններն ու բացթողումները:
- 5.6.8. Յուրաքանչյուր օրվա վերջում ամփոփել և վերլուծել օրվա կատարած աշխատանքները:
- 5.6.9. Վերլուծել պրակտիկանտների հաշվետվությունները:
- 5.6.10. Մասնակցել յուրաքանչյուր շաբաթվա մեթոդական խորհրդակցությանը և վերլուծել պրակտիկայի արդյունքները, ուսանողների հաճախումները և այլ հարցեր:
- 5.6.11. Հետագա օգտագործման նպատակով ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների հետ վերլուծել, ընդհանրացնել դրական փորձը և ուսանողների մանկավարժական պրակտիկայի կազմակերպման գործում եղած նորությունները:
- 5.6.12. Պրակտիկայի ավարտից հետո պրակտիկայի և կարիերայի բաժին ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների մասին:
- 5.6.13. Կատարված աշխատանքների արդյունքով պրակտիկայի և կարիերայի բաժնի ղեկավարի հետ գնահատել ուսանողին:

5.7. Մանկավարժություն և հեգեբանություն, Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա դասավանդող դասախոսների պարտականությունները.

5.7.1. Մասնակցել պրակտիկայի նախապատրաստական, ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսներին:

5.7.2. Հաճախել պրակտիկայի անցկացման վայր և մեթոդիստների, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների հետ վերլուծել ուսանողների կողմից անցկացրած դասերը, օգնել կազմելու պլանավորման փաստաթղթերը:

5.7.3. Օգնել ուսանողներին կազմելու աշակերտների հոգեբանամանկա-վարժական բնութագրերը, ստուգել և գնահատել դրանք:

5.8. Դպրոցի ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի պարտականությունները

5.8.1. Մասնակցել ինստիտուտի պրակտիկայի բաժնի կողմից կազմակերպվող մանկավարժական պրակտիկայի ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսներին:

5.8.2. Ուսանողներին ծանոթացնել ֆիզկուլտուրայի ուսուցչի մանկավարժական գործունեության բովանդակությանը և հիմնական ուղղություններին:

5.8.3. Ուսանողների համար կազմակերպել բաց և ցուցադրական դասեր, արտադասարանական պարապմունքներ, նրանց հետ համատեղ կազմակերպել և անցկացնել ֆիզիկական կուլտուրայի առողջարարական և մարզական զանգվածային աշխատանքներ, դաստիարակչական միջոցառումներ:

5.8.4. Օգնել ուսանողներին՝ դասերի, արտադասարանական պարապմունքների և դաստիարակչական միջոցառումների նախապատրաստման և իրականացման հարցերում:

5.8.5. Մասնակցել պրակտիկանտների անցկացրած դասերին, արտադասարանական պարապմունքներին, դաստիարակչական միջոցառումներին և վերլուծել դրանք:

5.8.6. Ուսանողներին մասնակից դարձնել դպրոցում անցկացվող ֆիզկուլտուրային-առողջարարական, դաստիարակչական, մարզական և քարոզչական աշխատանքներին:

5.9. Դպրոցի տնօրենի պարտականությունները.

5.9.1. Ապահովում է պրակտիկան անցկացնելու պայմանները:

5.9.2. Ուսանողներին ծանոթացնում է դպրոցի պատմությանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքին, կանոններին և այլն:

5.9.3. Հսկում է ուսանողների կողմից իրականացվող ուսումնադաստիարակչական և ֆիզկուլտուրային-զանգվածային աշխատանքները:

6. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ

6.1. **Մասնագիտական պրակտիկայի (ՖԴ և սպորտային մարզումներ) նպատակը.** ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ուսանողների տեսական պատկերացումների և մասնագիտական գիտելիքների ամրապնդում, դրա հիման վրա ընտրած մարզաձևում մարզչի պրակտիկ գործունեությանը անհրաժեշտ մասնագիտական կարողությունների և հմտությունների տիրապետում, որոնք անհրաժեշտ են մանկապատանեկան մարզադպրոցներում (ՄՊՄԴ), օլիմպիական հերթափոխի մարզադպրոցներում, փրկարարական կառույցներում, մարզական միություններում, մարզական ակումբներում մարզական հասարակական այլ կազմակերպություններում դաստիարակչական, մարզական զանգվածային աշխատանքների կազմակերպման և անցկացման համար:

6.2. **Մասնագիտական պրակտիկայի (Մարզական լրագրություն) նպատակը.** հաղորդել տպագիր մամուլի, հեռուստալրագրության, առցանց լրագրության հիմնական դրույթները, կազմակերպել և իրականացնել գործնական հանդիպումներ՝ հեղինակելով լրագրողական նյութեր, հեռուստառադիո հաղորդումներ՝ պատրաստելով ֆոտո և տեսապատմություններ:

6.3. **Մասնագիտական պրակտիկայի (Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա) նպատակը.** մասնագետների տեսական գիտելիքների ամրապնդումը և գործնականում դրա կիրառումը, մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռք բերումը ու կատարելագործումը:

6.4. **Կլինիկական պրակտիկայի նպատակը.** հարստացնել կինեզիոլոգ մասնագետների մասնագիտական տեսական գիտելիքները, ձեռք բերել

վերականգնողական գործունեություն իրականացնելու պրակտիկ կարողություններ և հմտություններ:

6.5. Մասնագիտական պրակտիկայի խնդիրները.

6.5.1. Ուսումնասիրել պրակտիկայի մարզաբազայի աշխատանքային գործունեությունը, ղեկավարման համակարգը, մարզիչի գործունեության բովանդակությունը, մարզական գործընթացի անցկացման պայմանները և առանձնահատկությունները:

6.5.2. Ընտրած մարզաձևում մանկավարժական կարողությունների, հմտությունների և պրոֆեսիոնալ կիրառական պատրաստության մակարդակը հասցնել այն աստիճանի, որը թույլ կտա ինքնուրույն լուծել ընտրած մարզաձևում մարզիկների պատրաստության գործնական խնդիրները:

6.5.3. Ուսումնասիրել ընտրած մարզաձևում ուսումնամեթոդական փաստաթղթերը և ձևավորել գործնական կարողություններ, որոնք թույլ կտան ինքնուրույն կազմել պլանավորման փաստաթղթեր և կատարել տարբեր մեթոդական աշխատանքներ:

6.5.4. Ընտրած մարզաձևում ձևավորել գործնական կարողություններ և հմտություններ ուսումնամարզական պարապմունքներ անցկացնելու նպատակով:

6.5.5. Ուսանող պրատիկանտի մոտ ձևավորել հետաքրքրություն, ակտիվ և ստեղծագործական վերաբերմունք մարզչական աշխատանքի նկատմամբ:

6.5.6. Փրկարարները պետք է ուսումնասիրեն փրկարարական, որոնողական աշխատանքների կազմակերպման և անցկացման առանձնահատկությունները, տիրապետեն ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառման ձևերին, տուժածների տեղափոխման մեթոդներին:

6.5.7. Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի մասնագետները պետք է ուսումնասիրեն ֆեդերացիայի կողմից կազմակերպվող սպորտային միջոցառումների և մարզումների առանձնահատկությունները: Խրախուսեն հաշմանդամություն ունեցող երիտասարդների ներգրավվածությունը սպորտային միջոցառումներին: Բարձրացնել հասարակության իրազեկվածությունը հաշմանդամություն ունեցող հայ մարզիկների մասին: Տեսանյութերի դիտում, քննարկում և մասնագիտական տեսական գիտելիքների ներդրումը գործնական պարապմունքներում:

6.5.8. Լրագրողների մասնագիտական գործունեության նկատմամբ հետաքրքրության ձևավորում, աշխարհայացքի և ստեղծագործական մտածողության ձևավորում: Տարբեր ձևաչափերի զանգվածային լրատվամիջոցների աշխատանքների համակարգի ծանոթացում: Ստեղծագործական նյութի պլանավորման, նախագծման, կազմակերպման, իրականացման, գնահատման և ինքնագնահատման կարողությունների մշակում: Ինքնուրույն հոդվածների, հեռուստատեսային և ռադիո նյութերի պատրաստման հմտությունների ձևավորմանը: Մասնագիտական գործունեության, առաջնային հմտությունների, հոդվածների. հեռուստատեսային և ռադիո հոդվածների ուսումնասիրման կարողությունների ձևավորմանը:

6.6. Կլինիկական պրակտիկայի խնդիրները.

6.6.1. Ձևավորել կարողություն հասկանալու հիվանդությունների ժամանակ տեղի ունցող ախտաբանական փոփոխությունների պատճառները, զարգացման մեխանիզմները, հիմնավորելու վարժությունների բուժիչ ազդեցությունը:

6.6.2. Ձևավորել կարողություն ինքնուրույն կազմելու հիվանդի ֆիզիկական վերականգնման ծրագիր և իրականացնել այն:

6.6.3. Բարձրացնել ապագա մասնագետի մասնագիտական պատրաստության մակարդակը:

6.7. Մասնագիտական և կլինիկական պրակտիկայի բազաները և կազմակերպումը

6.7.1. Պրակտիկայի անցկացման վայրը, ժամկետները, մեթոդիստների և ուսանողների խմբերի կազմերը հաստատվում են ինստիտուտի ռեկտորի հրամանով:

6.7.2. Ինստիտուտի մասնագիտական և կլինիկական պրակտիկայի բազաներ են համարվում համապատասխան պայմաններ ունեցող տարբեր մարզադպրոցները, վերականգնողական կլինիկաները, հանրային և մասնավոր տպագիր լրատվամիջոցները, հեռուստառադիո ընկերությունները, հաշմանդամային սպորտի հետ առնվող տարբեր կազմակերպությունները:

6.7.3. Պրակտիկայի խումբը կազմվում է ըստ մասնագիտությունների:

6.7.4. Յուրաքանչյուր խմբում ուսանողների քանակը սահմանվում է տվյալ ուսումնական տարվա պրոֆեսորադասախոսական անձնակազմի ժամերի հաշվարկի չափանիշներով:

6.7.5. Նշված պրակտիկաները անցկացվում են պրակտիկայի ծրագրի համապատասխան:

6.7.6. Մեթոդիստներ են ընտրվում Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմից:

6.8. Մասնագիտական և կլինիկական պրակտիկայի անցկացման կարգը

6.8.1. Ինստիտուտի պրակտիկան իրականացվում է համաձայն ինստիտուտի կողմից կնքված պայմանագրի: Պրակտիկայի անցկացման պայմանագիրը կնքվում է Ինստիտուտի և մարզաբազաների տնօրենների, կազմակերպության ղեկավարների միջև՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այն կարող է լինել ծառայությունների մատուցման վճարովի կամ անհատույց պայմանագիր:

6.8.2. Ինստիտուտը սահմանում է պրակտիկայի մեթոդիստի, հրավիրված մեթոդիստների, մարզիչների և մարզադպրոցի տնօրենի, առողջապահական հաստատությունների տնօրինության, մեթոդիստի, փրկարարական ջոկատի հրամանատարի և այլ մասնագետների բեռնվածության չափը: Հաշվարկը կատարվում է ելնելով պրակտիկային մասնակցած փաստացի ուսանողների թվից:

6.8.3. Առանձին դեպքերում Երևանից դուրս բնակվող կամ մասնագիտությամբ աշխատող ուսանողները կարող են պրակտիկան անցնել անհատապես իրենց բնակության վայրին մոտ կամ աշխատավայրում այն կազմակերպելու պատրաստության մասին համապատասխան մարզադպրոցի, առողջարարական կենտրոնի, փրկարարական ջոկատների, ներառական դպրոցների և լրատվամիջոցների ղեկավարության գրավոր համաձայնության և կնքված պայմանագրի հիման վրա:

6.9. Մասնագիտական և կլինիկական պրակտիկային մասնակցող ուսանողների պարտականությունները

Մասնագիտական և կլինիկական պրակտիկային մասնակցող ուսանողը պարտավոր է՝

6.9.1. Մասնակցել պրակտիկայի ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսին, յուրաքանչյուր շաբաթվա ժողովներին, հանդիպում ունենալ պրակտիկայի վայրի տնօրենի, ուսումնական մասի ղեկավարի և մարզչի հետ:

6.9.2. Յուրաքանչյուր պրակտիկանտ պարտավոր է իրեն կցված խմբի կամ հիվանդի համար կազմել մանկավարժական պրակտիկայի ծրագրով նախատեսված բոլոր փաստաթղթերը և իրականացնել նույն ծրագրով նախատեսված պրակտիկ ամբողջ գործունեությունը:

6.9.3. Իրականացնել ամենօրյա փոխօգնություն խմբում ընդգրկված մյուս ուսանողներին՝ տարբեր միջոցառումների կազմակերպման հարցերում:

6.9.4. Ենթարկվել պրակտիկայի վայրի ներքին կանոնակարգին, բազայի տնօրինության և մեթոդիստի հրահանգներին:

6.9.5. Լրագրող ուսանողները պարտավոր են իրականացնել պրակտիկայի ծրագրով նախատեսված ամբողջ գործունեությունը:

6.9.6. Պրակտիկայի ավարտից 2 օր առաջ պրակտիկանտը մեթոդիստին է ներկայացնում պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ իր հաշվետվությունը (պրակտիկանտի տետրը):

7. Գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաներ

7.1. Գիտամանկավարժական պրակտիկայի նպատակը. պատրաստել մագիստրանտներին ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրականացնելու արդյունավետ մասնագիտական գործունեություն:

7.2. Գիտահետազոտական պրակտիկայի նպատակը. ձևավորել մագիստրանտների մասնագիտական աշխարհայացքը և հմտություններ իրականացնելու գիտաորոնողական և հետազոտական աշխատանք:

7.3. Գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների խնդիրները.

7.3.1. Պրակտիկ գործընթացում ամրապնդել և բարձրացնել մասնագիտական գիտելիքների և կարողությունների մակարդակը:

7.3.2. Ձևավորել հմտություններ ինքնուրույն իրականացնելու գիտամանկավարժական գործունեություն:

7.3.4. Կատարելագործել սկսնակ դասախոսի վերլուծական և հաղորդակցական կարողությունները:

7.3.5. Ձևավորել պատկերացում ֆիզիկական դաստիարակության, սպորտային պատրաստության, մարզական լրագրության, առողջարարական և ադապտացված ֆիզիկական կուլտուրայի ոլորտում գիտաշխատողի գործունեության յուրահատկությունների վերաբերյալ:

7.3.6. Ձևավորել գիտելիքներ գիտական հետազոտության իրականացման մեթոդաբանության վերաբերյալ և այն իրականացնելու պրակտիկ հմտություններ:

7.4. Պրակտիկայի բազաները և կազմակերպումը

7.4.1. Պրակտիկայի անցկացման վայրը, ժամկետները, մեթոդիստների և ուսանողների խմբերի կազմերը հաստատվում են ինստիտուտի ռեկտորի հրամանով:

7.4.2. Գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկան անցկացվում է համաձայն պրակտիկայի ծրագրի և պրակտիկայի բազաներ կարող են հանդիսանալ ինստիտուտի ամբիոնները, մարզական տարբեր ֆեդերացիաները, մարզական հասարակական կազմակերպությունները, Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջը, համապատասխան պայմաններ ունեցող տարբեր մարզադպրոցները, վերականգնողական կլինիկաները, հանրային և մասնավոր տպագիր լրատվամիջոցները, հեռուստառադիո ընկերությունները, հաշմանդամային սպորտի հետ առնչվող տարբեր կազմակերպությունները:

7.5. Պրակտիկային մասնակցող մագիստրանտների պարտականությունները.

7.5.1. Մասնակցել ինստիտուտի պրակտիկայի և կարիերայի բաժնի կողմից կազմակերպված գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկայի ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսներին:

7.5.2 Մագիստրանտները պարտավոր են ներկայանալ պրակտիկայի վայր ժամանակից 10-15 րոպե առաջ և մեթոդիստի հետ աշխատել մինչև տվյալ օրվա համար նախատեսված աշխատանքների ավարտը:

7.5.3. Ենթարկվել պրակտիկայի վայրի ներքին կանոնակարգին, բազայի տնօրինության և մեթոդիստի հրահանգներին

7.5.4. Յուրաքանչյուր պրակտիկանտ պարտավոր է իրականացնել պրակտիկայի ծրագրով նախատեսված ամբողջ գործունեությունը:

7.5.5. Պրակտիկայի վերջին օրը մագիստրանտը մեթոդիստին է ներկայացնում պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ իր հաշվետվությունը (պրակտիկանտի տետրը):